ՆԱԽԱԳԻԾ
Երկրորդ ընթերցում
Լրամշակված

Պ-297-25.09.2019,17.01.2020-ՏՀ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Օ Ր Ե Ն Ք Ը

«ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Էներգետիկայի մասին» 2001 թվականի մարտի 7-ի ՀՕ-148 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 24-րդ հոդվածում լրացնել նոր՝ 2.1-ին մաս.

«2.1. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված փաստաթղթերի հետ մեկտեղ էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության, ջերմային էներգիայի արտադրության կամ էլեկտրական և ջերմային էներգիայի համակցված արտադրության լիցենզիա ստանալու համար դիմողը ներկայացնում է նաև «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» օրենքի իմաստով իրական սեփականատերերի վերաբերյալ տեղեկություններ բովանդակող քաղվածք՝ լիցենզիա ստանալու համար դիմելու օրվան նախորդող 5 օրվա դրությամբ:»:

Հոդված 2. Օրենքում լրացնել նոր՝ 28.1-ին հոդված.

«**Հոդված 28.1. Լիցենզավորված անձի իրական սեփականատերերի վերաբերյալ տեղեկություններ բովանդակող քաղվածք ներկայացնելը**

1. Էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության, ջերմային էներգիայի արտադրության կամ էլեկտրական և ջերմային էներգիայի համակցված արտադրության լիցենզիա ունեցող անձը պարտավոր է «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» օրենքով սահմանված կարգով և ժամկետում իրական սեփականատիրոջ վերաբերյալ տեղեկությունների փոփոխման պետական գրանցումից հետո 14 օրվա ընթացքում այդ մասին տեղեկացնել հանձնաժողովին՝ ներկայացնելով իրական սեփականատերերի վերաբերյալ տեղեկություններ բովանդակող քաղվածք:
2. Սույն հոդվածի 1-ին մասում նշված լիցենզավորված անձի կողմից նույն մասով սահմանված կարգով հանձնաժողովին տեղեկատվության (այդ թվում՝ քաղվածքի) չտրամադրումը առաջացնում է նախազգուշացում:
3. Հանձնաժողովի կողմից սույն հոդվածի 2-րդ մասին համապատասխան լիցենզավորված անձի նկատմամբ նախազգուշացման կիրառման վերաբերյալ որոշման ուժի մեջ մտնելու պահից տասնօրյա ժամկետում լիցենզավորված անձի կողմից սույն հոդվածի 1-ին մասով սահմանված տեղեկատվությունը (այդ թվում՝ քաղվածքը) հանձնաժողով չներկայացնելու դեպքում վերջինիս լիցենզիայի գործողությունը կասեցվում է մինչև տեղեկատվության ներկայացումը, բայց ոչ ավելի, քան լիցենզիայի գործողությունը կասեցնելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումն ուժի մեջ մտնելու պահից 20 օրով, որի ընթացքում տեղեկատվության չներկայացման դեպքում լիցենզիայի գործողությունը դադարեցվում է:»:

Հոդված 3.

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2021 թվականի հունվարի 1-ից:

2. Մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության, ջերմային էներգիայի արտադրության կամ էլեկտրական և ջերմային էներգիայի համակցված արտադրության լիցենզիա ստացած անձինք պարտավոր են իրական սեփականատերերի վերաբերյալ տեղեկություններ բովանդակող քաղվածքը ներկայացնել հանձնաժողով՝ սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո վեցամսյա ժամկետում: Սույն մասով սահմանված պարտավորության չկատարման դեպքում լիցենզավորված անձի նկատմամբ կիրառվում է պատասխանատվություն՝ սույն օրենքի 28.1-ին հոդվածին համապատասխան:

ՏԵՂԵԿԱՆՔ

ՆԱԽԱԳԻԾ
Երկրորդ ընթերցում
Լրամշակված
Պ-297-25.09.2019,17.01.2020-ՏՀ-011/1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Օ Ր Ե Ն Ք Ը

«ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

~~***Հոդված 1.*** «Էներգետիկայի մասին» 2001 թվականի մարտի 7-ի ՀՕ-148 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 4-րդ հոդվածում լրացնել նոր՝ 15.1-ին կետ.~~

~~**«15.1) իրական սեփականատերերի վերաբերյալ տեղեկություններ բովանդակող քաղվածք՝** իրական սեփականատերերի հայտարարագրի կամ իրական սեփականատերերի վերաբերյալ փոփոխված տեղեկությունների վերաբերյալ քաղվածք Հայաստանի Հանրապետության իրավաբանական անձանց պետական միասնական գրանցամատյանից.~~

~~Քաղվածքում ներկայացվում են, նաև էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության, ջերմային էներգիայի արտադրության կամ էլեկտրական և ջերմային էներգիայի համակցված արտադրության լիցենզիա ստանալու համար դիմող իրավաբանական անձի կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալում 10 տոկոսից ավելի մասնաբաժին ունեցող անձանց վերաբերյալ տեղեկությունները.»։~~

Հոդված 1~~2~~. «Էներգետիկայի մասին» 2001 թվականի մարտի 7-ի ՀՕ-148 օրենքի (այսուհետ՝ Օրենք) ~~Օրենքի~~ 24-րդ հոդվածում լրացնել նոր՝ 2.1-ին մաս.

«2.1. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված փաստաթղթերի հետ մեկտեղ էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության, ջերմային էներգիայի արտադրության կամ էլեկտրական և ջերմային էներգիայի համակցված արտադրության լիցենզիայի ~~ի~~ ստանալու համար դիմողը ներկայացնում է նաև «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» օրենքի իմաստով –իրական սեփականատերերի վերաբերյալ տեղեկություններ բովանդակող քաղվածք՝ լիցենզիա ստանալու համար դիմելու օրվան ~~դիմումը ներկայացնելուն~~ նախորդող 5 օրվա դրությամբ:~~.~~»:

Հոդված 2~~3~~. Օրենք~~ի~~ում լրացնել նոր՝ 28.1-ին ~~-րդ~~ հոդված~~ում լրացնել նոր՝ 3-րդ մաս~~.

«~~Հոդված~~ 28.1. Լիցենզավորված անձի իրական սեփականատերերի վերաբերյալ տեղեկություններ բովանդակող քաղվածք ներկայացնելը

4. Էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության, ջերմային էներգիայի արտադրության կամ էլեկտրական և ջերմային էներգիայի համակցված արտադրության լիցենզիա ունեցող անձը պարտավոր է «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» օրենքով սահմանված կարգով և ժամկետում իրական –սեփականատիրոջ վերաբերյալ տեղեկությունների փոփոխման պետական –գրանցումից հետո 14 օրվա ընթացքում այդ մասին տեղեկացնել հանձնաժողովին՝ ներկայացնելով իրական սեփականատերերի վերաբերյալ տեղեկություններ բովանդակող քաղվածք:

5. Սույն հոդվածի 1-ին մասում նշված լիցենզավորված անձի կողմից նույն մասով սահմանված կարգով հանձնաժողովին տեղեկատվության (այդ թվում՝ քաղվածքի) չտրամադրումը առաջացնում է նախազգուշացում:

6. Հանձնաժողովի կողմից սույն հոդվածի 2-րդ մասին համապատասխան լիցենզավորված անձի նկատմամբ նախազգուշացման կիրառման վերաբերյալ որոշման ուժի մեջ մտնելու պահից տասնօրյա ժամկետում լիցենզավորված անձի կողմից սույն հոդվածի 1-ին մասով սահմանված տեղեկատվությունը (այդ թվում՝ քաղվածքը) հանձնաժողով չներկայացնելու դեպքում վերջինիս լիցենզիայի գործողությունը կասեցվում է մինչև տեղեկատվության ներկայացումը, բայց ոչ ավելի,

բան լիցենզիայի գործողությունը կասեցնելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումն ուժի մեջ մտնելու պահից 20 օրով, որի ընթացքում տեղեկատվության չներկայացման դեպքում լիցենզիայի գործողությունը դադարեցվում է:»:

~~«3. Էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության, ջերմային էներգիայի արտադրության կամ էլեկտրական և ջերմային էներգիայի համակցված արտադրության լիցենզիա ունեցող անձը «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» օրենքով սահմանված ժամկետում իրականացնում է իրական սեփականատերերի գրանցում և լիազոր մարմին է ներկայացնում իրական սեփականատերերի վերաբերյալ տեղեկություններ բովանդակող քաղվածք, ինչպես նաև «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» օրենքով սահմանված կարգով և ժամկետում իրական սեփականատիրոջ փոփոխության պետական գրանցումից հետո 14 օրվա ընթացքում փոփոխության մասին տեղեկացնում է լիազոր մարմնին՝ ներկայացնելով իրական սեփականատերերի վերաբերյալ տեղեկություններ բովանդակող քաղվածք:»~~

~~Հոդված 4. Օրենքի 30.1-ին հոդվածում~~՝

~~1. Լրացնել նոր՝ 1.1-ին կետ,~~
~~«1.1. լիցենզավորված անձի լիցենզիան կասեցվում է, եթե բացահայտման օրվանից հետո 10 օրյա ժամկետում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության, ջերմային էներգիայի արտադրության կամ էլեկտրական և ջերմային էներգիայի համակցված արտադրության լիցենզավորված անձը չի ներկայացրել սույն օրենքի 24-ր հոդվածի 2.1-ին մասով պահանջվող իրական սեփականատերերի վերաբերյալ տեղեկություններ բովանդակող քաղվածք:»~~

~~2. 2-րդ մասում լրացնել նոր՝ «ե» կետ.~~
~~«ե) սույն հոդվածի 1.1-ին խախտումը մեկ տարվա ընթացքում կրկին թույլ տալու դեպքում:»~~

Հոդված 3~~5~~. ~~Եզրափակիչ մաս եւ և անցումային դրույթներ~~

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2021~~0~~ թվականի ~~մարտի~~ հունվարի 1-ից:

~~2. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո սույն օրենքի իմաստով էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության, ջերմային էներգիայի արտադրության կամ էլեկտրական և ջերմային էներգիայի համակցված արտադրության լիցենզիա ունեցող անձինք իրական սեփականատերերի վերաբերյալ առաջին հայտարարագիրը պետական ռեգիստր են ներկայացնում ոչ ուշ, քան մինչեւ 2020 թվականի հուլիսի 1-ը:~~

2~~3~~. Մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության, ջերմային էներգիայի արտադրության կամ էլեկտրական և ջերմային էներգիայի համակցված արտադրության լիցենզիա ստացած անձինք պարտավոր են իրական սեփականատերերի վերաբերյալ տեղեկություններ բովանդակող քաղվածքը ~~հանձնաժողով են~~ ներկայացն~~ում~~ել հանձնաժողով՝ սույն օրենքն ուժի մեջ մտնելուց~~ց~~ հետո ~~եռամ~~վեցամսյա ժամկետում: Սույն մասով սահմանված պարտավորության չկատարման դեպքում լիցենզավորված անձի նկատմամբ կիրառվում է պատասխանատվություն՝ սույն օրենքի 28.1-ին հոդվածին համապատասխան:

Ա Մ Փ Ո Փ Ա Թ Ե Ր Թ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (ՓԱՍՏԱԹՂԹԱՅԻՆ ԿՈԴ՝ Պ-297-25.09.2019-ՏՀ-011/1) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

	Առաջարկության, (փոփոխության, լրացման) հեղինակը	**Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջար-կությունը**	**Առաջարկությունը (փոփոխությունը, լրացումը)**	**Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը**	**Առաջարկությունն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ Հանձնաժողովի որոշումը**
1	**2**	**3**	**4**	**5**	**6**
1	ՀՀ կառավարություն	Նախագծի 1-ին հոդված	Նախագծի 1-ին հոդվածով իրական սեփականատերերի վերաբերյալ տեղեկություններ բովանդակող քաղվածքի հասկացությունից հետո սահմանվում է, որ Քաղվածքում ներկայացվում են 10%-ից ավելի մասնաբաժին ունեցող անձանց վերաբերյալ տեղեկությունները: Հարկ է նկատել, որ «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 26-րդ հոդվածի 25-րդ մասով սահմանվում է, որ. «Իրավաբանական անձի իրական սեփականատիրոջ պետական գրանցումը հավաստվում է պետական միասնական գրանցամատյանից տրված քաղվածքով, որն ….»: Միաժամանակ, նույն օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետը սպառիչ սահմանում է իրական սեփականատիրոջ հասկացությունը: Վերոնշյալի համատեքստում նախագծով առաջարկվող նոր կարգավորումը նպատակահարմար չէ և ամբողջությամբ չի արտացոլում «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված հասկացությանը: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ իրական	Ընդունվել է, նախագծում կատարվել են ուղղումներ՝ Հոդված 1-ը նախագծից հանվել է և **Նախագծի 2-րդ Հոդվածում հղում է արվել համապատասխան Օրենքին:**	Ընդունվել է

			սեփականատերերի վերաբերյալ տեղեկություններ բովանդակող քաղվածքի հասկացության սահմանման շրջանակներում հղում է կատարվում Հայաստանի Հանրապետության իրավաբանական անձանց միասնական գրանցամատյանից ստացվող քաղվածքին՝ առաջարկում ենք խնդրո առարկա՝ 10% մասնակցություն սահմանող հասկացությունը հանել նախագծից:		
2	ԱԺ պատգամավոր Արտակ Մանուկյան	Նախագծի *4*-րդ հոդված	Նպատակահարմար է լիցենզավորված անձի կողմից իրական սեփականատիրոջ փոփոխման դեպքում հանձնաժողովին տեղեկացնելու և համապատասխան քաղվածք ներկայացնելու *պարտավորության խախտման համար պատասխանատվության կիրառման ընթացակարգը սահմանել առանձին հոդվածով՝ ըստ պատասխանատվության միջոցների կիրառման հերթականության* (նախ՝ **նախազգուշացում**, այնուհետև՝ **տուգանքի կիրառում**, լիցենզիայի **գործողության կասեցում** և **դադարեցում**):	Ընդունվել է: **Նախագծի 4-րդ հոդվածը հանվել է** և Նախագծի 3-րդ հոդվածում կատարվել է փոփոխություն՝ Օրենքում ավելացնել նոր՝ 28.1-ին հոդված:	Ընդունվել է
3	ՀՀ կառավարություն	Նախագծի 3-րդ հոդված	Անհրաժեշտ է նախագծի 3-րդ հոդվածով օրենքի 28-րդ հոդվածում լրացվող 3-րդ մասում հստակեցնել՝ ա. *«օրենքով սահմանված ժամկետում»* արտահայտությունը, քանի որ գրանցման համար նման ժամկետ՝ ինչպես «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում, այնպես էլ՝ նախագծում առկա չէ, բ. *«իրականացնում է իրական սեփականատերերի գրանցում»* ձևակերպումը՝ հաշվի առնելով այն, որ իրական սեփականատերերի գրանցում իրականացնողը ոչ թե իրավաբանական անձն է, այլ իրավասու համապատասխան պետական մարմինը:	Ընդունվել է: Նախագծի 3-րդ հոդվածով առաջարկվող փոփոխության փոխարեն առաջարկվել է **Օրենքում ավելացնել նոր՝ 28.1-ին հոդված**:	Ընդունվել է
4	ՀՀ կառավարություն	Նախագիծ	Նախագծում, այդ թվում որպես համապատասխան պարտավորության խախտման համար պատասխանատվություն կիրառող, նշված է լիազոր մարմին,	Ընդունվել է:	Ընդունվել է

			որպիսին Օրենքի տրամաբանությունից և իրավասությունների շրջանակից ելնելով կարող է հանդիսանալ հանձնաժողովը: Ուստի, տարընկալումներից խուսափելու նպատակով անհրաժեշտ է նախագծում «*լիազոր մարմին*» բառերը բոլոր հոլովաձևերով փոխարինել «*հանձնաժողով*» բառով՝ համապատասխան հոլովաձևերով (կրճատ անվանումը որպես հասկացություն սահմանված է Օրենքով):		
5	ԱԺ պատգամավոր Արտակ Մանուկյան	Նախագծի 5-րդ հոդված	Նախագծի 5-րդ հոդվածի՝ 1) համարկալումը դարձնել 3 և հանել «եզրափակիչ մաս և անցումային դրույթներ» բառերը. 2) 1-ին մասում՝ «…2020 թվականի մարտի…» թիվը և բառերը փոխարինել «…2021 թվականի հունվարի…» թվով և բառերով. 3) 2-րդ մասը հանել. 4) 3-րդ մասի համարակալումը դարձնել 2 և շարադրել նոր խմբագրությամբ. «2. Մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության, ջերմային էներգիայի արտադրության կամ էլեկտրական և ջերմային էներգիայի համակցված արտադրության լիցենզիա ստացած անձինք պարտավոր են իրական սեփականատերերի վերաբերյալ տեղեկություններ բովանդակող քաղվածքը ներկայացնել հանձնաժողով՝ սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո վեցամսյա ժամկետում: Սույն մասով սահմանված պարտավորության չկատարման դեպքում լիցենզավորված անձի նկատմամբ կիրառվում է պատասխանատվություն՝ սույն օրենքի 28.1-ին հոդվածին համապատասխան:»:	Ընդունվել է:	
6	ԱԺ պատգամավոր Արտակ Մանուկյան	Նախագծի 2-րդ և 3-րդ հոդվածներ	Նախագծի 2-րդ և 3-րդ հոդվածների համարակալումը համապատասխանաբար փոխել՝ 1-ին և 2-րդ:	Ընդունվել է:	